ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 02-26-Ի ՆԻՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Ազգային ժողովի արտահերթ ընտրության դեպքում առաջին նստաշրջանը հրավիրվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին, որի մասին հայտարարում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:)

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	«Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբ ստեղծելու մասին»	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 6, «Հայաստան» խմբակցության 2 «Պատիվ ունեմ» խմբակցության 1 պատգամավոր**	ԱԺ-ը 65 կողմ, 1 դեմ, 15 ձեռնպահ ձայներով հաստատեց ԱԺ-ի հաշվիչ հանձնախմբի ձևավորման կարգի մասին ԱԺ որոշումը:
2.	ՀՀ Ազգային ժողովի նախագահի ընտրություն	**Առաջադրվել են պատգամավորներ Մխիթար Զաքարյանի, Արթուր Սարգսյանի և Ալեն Սիմոնյանի թեկնածությունները:**	Գաղտնի քվեարկության արդյունքները. Մխիթար Զաքարյան-կողմ՝ 0 Արթուր Սարգսյան - կողմ՝ 0 Ալեն Սիմոնյան - կողմ՝ 71

			ՀՀ Ազգային ժողովը 71 կողմ ձայներով ԱԺ նախագահ ընտրեց Ալեն Սիմոնյանին:
3.	ՀՀ Ազգային ժողովի նախագահի 3 տեղակալների ընտրություն	Առաջադրվել են պատգամավորներ **Ռուբեն Ռուբինյանի, Հակոբ Արշակյանի** թեկնածությունները, իսկ ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորներից՝ **Իշխան Սաղաթելյանի** թեկնածությունը:	ԱԺ-ը գաղտնի քվեարկությամբ ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալներ ընտրեց՝ - **Ռուբեն Ռուբինյանին** (70 կողմ, 0 դեմ), - **Հակոբ Արշակյանին** (71 կողմ, 0 դեմ) Իշխան Սաղաթելյանը 53 կողմ, 50 դեմ ձայներով չընտրվեց ԱԺ նախագահի տեղակալ: Ընդդիմադիր խմբակցությունը երկրորդ անգամ առաջադրեց **Իշխան Սաղաթելյանի** թեկնածությունը, ով 49 կողմ, 49 դեմ ձայներով կրկին չընտրվեց ԱԺ նախագահի տեղակալ: Ընդդիմադիր խմբակցությունը երրորդ անգամ առաջադրեց **Իշխան Սաղաթելյանի** թեկնածությունը, ով 64 կողմ, 37 դեմ ձայներով **ընտրվեց ԱԺ նախագահի տեղակալ:**

4.	**ա)** Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին, **բ)** Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին	**ա)** Խ-02.08.2021--012/0 Հեղինակ՝ **«Քաղաքացիական պայմանագիր»** խմբակցություն **բ)** Խ-02.08.2021--012/0 Հեղինակներ՝ **«Պատիվ ունեմ»** խմբակցություն, **«Հայաստան»** խմբակցություն	ՀՀ Ազգային ժողովը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներկայացրած որոշումն ընդունեց 70 կողմ, 29 դեմ, 0 ձեռնպահ ձայներով, իսկ «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունների ներկայացրած որոշումը մերժեց 33 կողմ, 0 դեմ, 68 ձեռնպահ ձայներով:
5.	**Մշտական հանձնաժողովների նախագահների ընտրություններ**	**02.08.2021**	
5.1	Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	Առաջադրվել է **Վլադիմիր Վարդանյանի** թեկնածությունը: («Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկ)	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 71, դեմ՝ 30 Վլադիմիր Վարդանյանն ընտրվեց Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.2	Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	Առաջադրվել է **Անդրանիկ Քոչարյանի**	Գաղտնի քվեարկության արդյունքները՝

		թեկնածությունը: («Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջարկ)	կողմ՝ 70, դեմ՝ 31 Անդրանիկ Քոչարյանն ընտրվեց Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.3	Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	Առաջադրվել է **Վահե Հակոբյանի** թեկնածությունը: («Հայաստան» խմբակցության առաջարկ)	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 59, դեմ՝ 43 Վահե Հակոբյանն ընտրվեց Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.4	Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Էդուարդ Աղաջանյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 72, դեմ՝ 30 Էդուարդ Աղաջանյանն ընտրվեց Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ:

5.5	Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Գեւորգ Պապոյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 70, դեմ՝ 30 Գեւորգ Պապոյանն ընտրվեց Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.6	Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Վահե Ղալումյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 74 դեմ՝ 26 Վահե Ղալումյանն ընտրվեց Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.7	Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 71, դեմ՝ 29

		Սիսակ Գաբրիելյանի թեկնածությունը:	Սիսակ Գաբրիելյանն ընտրվեց Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.8	Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Արման Եղոյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 71, դեմ՝ 31 Արման Եղոյանն ընտրվեց Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.9	Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Հերիքնազ Տիգրանյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 71, դեմ՝ 31 Հերիքնազ Տիգրանյանն ընտրվեց Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

5.10	Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը** առաջադրել է **Նարեկ Զեյնալյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 72, դեմ՝ 30 Նարեկ Զեյնալյանն ընտրվեց Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.11	Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Հայաստան»** խմբակցությունը առաջադրել է **Արմեն Գեւորգյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 62, դեմ՝ 40 Արմեն Գեւորգյանն ընտրվեց Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
5.12	Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրություն	**«Հայաստան»** խմբակցությունը առաջադրել է **Թագուհի Թովմասյանի** թեկնածությունը:	Գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 60, դեմ՝ 42 Թագուհի Թովմասյանն ընտրվեց Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի

			մշտական հանձնաժողովի նախագահ:
Հանձնաժողովի նախագահների ընտրությունից հետո «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հայտարարվեց ընդմիջում մինչև կառավարության ծրագրի ներկայացումը: ԱԺ-ի նիստը վերսկսվեց օգոստոսի 24-ին:			
6.	Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին	**ՀՀ կառավարություն Կ-012-20.08.2021,23.08.2021--012/0 ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**	ԱԺ-ն հավանություն տվեց Կառավարության ծրագրին՝ 70 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայներով «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը հայտարարեց, որ «Հայաստան» խմբակցությունը չի մասնակցել քվեարկությանը:

Առաջին նստաշրջանի աշխատանքներն ավարտվեցին 26.08.2021 ժամը 12:10-ին: